Թողարկման 18-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2011

մայիս

թիվ 5 (153)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

4 «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-131-Ն ՀՀ օրենքը

12 «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-132-Ն ՀՀ օրենքը

13 «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-133-Ն ՀՀ օրենքը

14 «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-134-Ն ՀՀ օրենքը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

16 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները վերաֆինանսավորման տոկոսադրույքի, որոշ ՍՊԸ-ների գրավատան կազմակերպման, «Սուփրա» ՍՊԸ-ին արտարժույթի առուվաճառքի լիցենզիաներ տրամադրելու, որոշ ՍՊԸ-ների լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ

16 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները որոշ ՍՊԸ-ների, «Ռեսո» ապահովագրական ՓԲԸ-ի՝ ներկայացուցչությունները, ինչպես նաև մի քանի ՓԲԸ-ների և «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի մասնաճյուղերը գրանցելու վերաբերյալ

16 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները մի շարք ՓԲԸ-ների, ՍՊԸ-ների և արտարժույթի փոխանակման կետերի նկատմամբ տուգանք կիրառելու և նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

17 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 77-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

20 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 78-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 1-ի թիվ 194-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

22 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 79-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

25 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 80-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 14-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

27 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 81-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 16-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

30 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 82-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 17-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

32 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 83-Ն որոշումը «Բանկի ղեկավար համարելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

41 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 84-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 269-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին»

42 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 85-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունվարի 27-ի թիվ 22-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին»

43 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՆԵՐԸ

«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»***

Հոդված 1. «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-150-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածում՝

1) «զ» կետի «համաձայնեցումը,» բառը հանել.

2) «ժ» կետի «հավաստագրումը կամ դրանց մի մասը ներառող գործընթաց է» բառերը փոխարինել «հավաստագրումն է» բառերով.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ «իբ» կետով.

«իբ) շահառուն վճարման ստացման վերջնական հասցեատերն է:»:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածում՝

1) վերնագիրը «դրա» բառից հետո լրացնել «կասեցնելը կամ» բառերով.

2) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ պարբերությունով.

«Սույն մասով սահմանված թույլտվություն ստանալու պահանջը չի տարածվում այն վճարահաշվարկային համակարգերի վրա, որոնցում Կենտրոնական բանկը հանդիսանում է համակարգի օպերատոր:».

3) 5-րդ մասը՝

ա. «կարող է» բառերից հետո լրացնել «կասեցնել կամ» բառերով.

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ պարբերությունով.

«Կասեցման ողջ ժամանակաշրջանում հայաստանյան վճարահաշվարկային համակարգի օպերատորը և այլ մասնակիցներ, արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի մասնակիցը չեն կարող տվյալ վճարահաշվարկային համակարգով որևէ վճարահաշվարկային ծառայություն մատուցել, բացառությամբ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից կասեցման որոշման մեջ նշված առանձին վճարահաշվարկային ծառայությունների:»:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն մասով նախատեսված երկամսյա ժամկետը որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով կարող է Կենտրոնական բանկի որոշմամբ կասեցվել մինչև մեկ ամիս ժամկետով: Կենտրոնական բանկի կողմից երկամսյա ժամկետում դիմումը չմերժելու կամ երկամսյա ժամկետը կասեցնելու մասին վճարահաշվարկային համակարգի օպերատորին չտեղեկացնելու դեպքում թույլտվությունը համարվում է տրված:».

2) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

3) 4-րդ մասի երկրորդ նախադասության «հինգ» բառը փոխարինել «քսան» բառով:

Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «ա» կետը «միջնորդագիրը» բառից հետո լրացնել «՝ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ձևով» բառերով.

2) 1-ին մասի «գ» կետից հանել «, վերջնահաշվարկների իրականացման կանոնները» բառերը.

3) 1-ին մասի «դ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«դ) դիմորդի իրավունքների և պարտավորությունների վերաբերյալ տեղեկանք, որն առնվազն պարունակում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված տեղեկությունները.».

** ՀՀՊՏ 2004 N 72 (371), 28.12.04:*

*** Ոչ պաշտոնական հրատարակություն:*

Ընդունված է 2011 թվականի ապրիլի 14-ին (ՀՀՊՏ N 27 (830), 13.05.11):

4) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ե», «զ» և «է» կետերով.

«ե) արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի օպերատորի հետ կնքված պայմանագիրը կամ կնքվելիք պայմանագրի նախագիծը.

զ) արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության հնարավոր ռիսկերի գնահատումը պարունակող տեղեկանք՝ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ձևով.

է) Կենտրոնական բանկի սահմանած այլ փաստաթղթեր:».

5) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Սույն հոդվածի 1-ին մասի «դ» կետով նախատեսված տեղեկանքը կարող է չպարունակել այն տեղեկությունները, որոնք արդեն իսկ ներառված են սույն հոդվածի 1-ին մասի «ե» կետով նախատեսված պայմանագրում կամ պայմանագրի նախագծում կամ Կենտրոնական բանկ ներկայացված այլ փաստաթղթերում:».

6) 2-րդ մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն մասով նախատեսված երկամսյա ժամկետը որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով կարող է Կենտրոնական բանկի որոշմամբ կասեցվել մինչև մեկ ամիս ժամկետով: Կենտրոնական բանկի կողմից երկամսյա ժամկետում դիմումը չմերժելու կամ երկամսյա ժամկետը կասեցնելու մասին դիմորդին չտեղեկացնելու դեպքում թույլտվությունը համարվում է տրված:».

7) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

8) 4-րդ մասի վերջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է կասեցնել կամ ուժը կորցրած ճանաչել արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվությունը, եթե համակարգի գործունեության կանոնների կամ համակարգի օպերատորի և հայաստանյան մասնակցի միջև հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերի փոփոխության կամ այլ հանգամանքների ի հայտ գալու հետևանքով Կենտրոնական բանկի խորհրդի հաստատած ուղեցույցի համաձայն կարող է վտանգվել Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական համակարգի կայունությունը և (կամ) իրացվելիությունը և (կամ) վճարունակությունը:».

9) 5-րդ մասի առաջին նախադասության «և սույն հոդվածի 1-ին մասի «դ» կետով սահմանված փաստաթղթերը» բառերը փոխարինել «և սույն հոդվածի 1-ին մասի «դ», «ե» և «է» կետերով սահմանված փաստաթղթերը» բառերով.

10) 5-րդ մասի երկրորդ նախադասության «հինգ» բառը փոխարինել «քսան» բառով:

Հոդված 5. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին և 8.2-րդ հոդվածներով.

«Հոդված 8.1. Հայաստանյան վճարահաշվարկային համակարգի ստեղծման և գործունեության թույլտվության տրամադրման մերժումը: Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվության տրամադրման մերժումը

1. Կենտրոնական բանկը մերժում է հայաստանյան վճարահաշվարկային համակարգի ստեղծման և գործունեության թույլտվության տրամադրումը կամ արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվության տրամադրումը, եթե՝

ա) ներկայացվել են կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ.

բ) ներկայացված փաստաթղթերը թերի են, ամբողջական չեն կամ հակասում են Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին.

գ) հայաստանյան վճարահաշվարկային համակարգի գործունեության կանոնակարգը չի համապատասխանում Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված տեխնիկական, անվտանգության, ծրագրային, մասնակցության կամ համակարգի գործունեության կանոններին ներկայացվող պահանջներին.

դ) Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով հաստատված ուղեցույցի համաձայն՝ այդպիսի համակարգի գործունեությունը կարող է վտանգել Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական համակարգի կայունությունը և (կամ) իրացվելիությունը և (կամ) վճարունակությունը.

ե) վճարահաշվարկային համակարգի ստեղծումը կամ արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցությունը կհանգեցնի համակարգի մասնակից բանկի՝ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված չափանիշներով հիմնավորված ֆինանսական վիճակի վատթարացմանը:

Հոդված 8.2. Վճարահաշվարկային միությունները

1. Վճարահաշվարկային ծառայություններ մատուցող անձինք իրենց գործունեությունը համակարգելու, շահերը ներկայացնելու և պաշտպանելու, տեղեկություններ փոխանակելու և այլ խնդիրներ համատեղ լուծելու նպատակով կարող են օրենքով սահմանված կարգով հիմնադրել շահույթ ստանալու նպատակ չհետապնդող վճարահաշվարկային միություններ (իրավաբանական անձանց միություններ) և (կամ) մասնակցել դրանց:

2. Վճարահաշվարկային միությունը չի կարող մատուցել վճարահաշվարկային ծառայություններ:

3. Վճարահաշվարկային միությունը պետական գրանցման օրվանից հետո՝ 10 օրվա ընթացքում, այդ մասին ծանուցում է Կենտրոնական բանկին՝ նշելով տեղեկություններ իր գտնվելու վայրի, կառավարման մարմինների և ղեկավարների մասին: Կենտրոնական բանկ ներկայացված տեղեկություններում փոփոխություն տեղի ունենալու դեպքում վճարահաշվարկային միությունը Կենտրոնական բանկին այդ մասին տեղեկացնում է 10 օրվա ընթացքում:»:

Հոդված 6. Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը «դեպքում՝» բառից հետո լրացնել «կասեցնել կամ» բառերով:

Հոդված 7. Օրենքի 17-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «բ» և «գ» կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ) իրավաբանական կամ ֆիզիկական անձանց բանկային հաշիվներով հաշվարկների իրականացումը.

գ) հայկական դրամով կամ արտարժույթով վճարողներից որպես ձեռնարկատիրական գործունեություն վճարումների ընդունումը շահառուին ցանկացած եղանակով անմիջականորեն կամ վճարահաշվարկային ծառայություններ մատուցող այլ անձի միջոցով վճարելու նպատակով կամ հայկական դրամով կամ արտարժույթով շահառուներին որպես ձեռնարկատիրական գործունեություն վճարումների կատարումն այդ անձանց օգտին ցանկացած եղանակով ստացված միջոցների հաշվին.».

2) 2-րդ մասը «հաշվարկների իրականացման ձևեր» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասում նշված ծառայությունների առանձին տեսակների ցանկը, որոնք կարող են մատուցել սույն օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասում չնշված անձինք» բառերով:

Հոդված 8. Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 9. Օրենքի 19-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի «ա» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունները, որոնք մատուցում են սույն օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով նախատեսված վճարահաշվարկային ծառայություններ, ինչպես նաև վերջիններիս հետ կապված և Կենտրոնական բանկի խորհրդի թույլատրած այլ վճարահաշվարկային ծառայություններ.».

2) 5-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Սույն հոդվածի 2-րդ մասի «ա» կետով սահմանված վճարահաշվարկային կազմակերպությունները համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում կարող են իրականացնել վճարահաշվարկային փաստաթղթերի և վճարային գործիքների պրոցեսինգ և քլիրինգ, արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառք, փոստային կապի ծառայությունների մատուցում:».

3) 5-րդ մասի երկրորդ պարբերությունը «գործունեություն» բառից հետո լրացնել «, ինչպես նաև դրամական (փողային) փոխանցումներ՝ համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում» բառերով.

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին մասով.

«5.1. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը կարող է առանց մասնաճյուղ ստեղծելու վճարումներ կատարել իր գտնվելու վայրից դուրս՝ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:».

5) 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված կանոնակարգում լրացումներ կամ փոփոխություններ կատարելու դեպքում վճարահաշվարկային կազմակերպությունը պարտավոր է լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ որոշումը ներկայացնել Կենտրոնական բանկ՝ համաձայնեցման:

Կենտրոնական բանկը լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ որոշումը ստանալու պահից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում տալիս է իր համաձայնությունը կամ մերժում է համաձայնության տրամադրումը: Որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով տասնհինգօրյա ժամկետը կարող է Կենտրոնական բանկի որոշմամբ կասեցվել միևչև մեկ ամիս ժամկետով: Կենտրոնական բանկի կողմից տասնհինգօրյա ժամկետում դիմումը չմերժվելու կամ տասնհինգօրյա ժամկետը կասեցնելու մասին դիմորդին չտեղեկացվելու դեպքում համաձայնությունը համարվում է տրված: Կենտրոնական բանկը մերժում է համաձայնության տրամադրումը, եթե լրացումները կամ փոփոխությունները հակասում են սույն օրենքին կամ այլ օրենքներին, ինչպես նաև դրանց հիման վրա ընդունված իրավական այլ ակտերին:

Սույն մասով նախատեսված փոփոխություններն ուժի մեջ են մտնում Կենտրոնական բանկի կողմից համաձայնություն տալու պահից: Աշխատանքի կանոնակարգում լրացումների կամ փոփոխությունների՝ Կենտրոնական բանկ ներկայացնելու տեխնիկական պայմաններն ու ձևը սահմանում է Կենտրոնական բանկի խորհուրդը:»:

Հոդված 10. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 19.1-ին հոդվածով

«Հոդված 19.1. Վճարահաշվարկային կազմակերպության գործառույթների պատվիրակումը

1. Վճարահաշվարկային կազմակերպությունը կարող է պատվիրակման պայմանագրով իր գործառույթներից որևէ մեկի կամ դրանց մի մասի կատարումը որոշակի ժամկետով կամ անժամկետ պատվիրակել այլ անձի:

2. Վճարահաշվարկային կազմակերպության գործառույթների պատվիրակումը չպետք է հանգեցնի վճարահաշվարկային կազմակերպության ներքին հսկողության որակի կամ վճարահաշվարկային կազմակերպության՝ օրենսդրության պահանջներին համապատասխանության նկատմամբ վճարահաշվարկային կազմակերպության իրավասու մարմնի կողմից իրականացվող մոնիթորինգի կարողության վատթարացմանը:

3. Վճարահաշվարկային ծառայությունների պատվիրակումը չի թույլատրվում:

4. Վճարահաշվարկային կազմակերպությունը կարող է իր գործառույթների իրականացումը պատվիրակել այլ անձի, եթե բավարարում է հետևյալ պայմանները միաժամանակ՝

ա) պատվիրակումը չպետք է հանգեցնի վճարահաշվարկային կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինների պատասխանատվության փոխանցման.

բ) վճարահաշվարկային կազմակերպության հարաբերությունները հաճախորդների հետ և նրա պատասխանատվությունը հաճախորդների առջև չպետք է ենթարկվեն փոփոխության.

գ) չպետք է վտանգվի այն իրավական ակտերի պահանջների կատարումը, որոնք անհրաժեշտ են լիցենզիայի ստացման և պահպանման համար.

դ) վճարահաշվարկային կազմակերպությանը լիցենզիայի տրամադրման որևէ այլ պայման չպետք է փոփոխվի կամ վերացվի:

5. Իր գործառույթների կատարումն այլ անձի պատվիրակելու դեպքում վճարահաշվարկային կազմակերպությունը պատասխանատվություն է կրում այդ անձի կողմից պատվիրակված ծառայության հետ կապված պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6. Վճարահաշվարկային կազմակերպության նկատմամբ սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված վերահսկողության իրականացման վերաբերյալ դրույթները տարածվում են նաև այն անձանց վրա, որոնց պատվիրակվել է գործառույթների կատարումը՝ պատվիրակված գործառույթների իրականացման մասով:

7. Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կարող են սահմանվել վճարահաշվարկային կազմակերպության կողմից գործառույթների պատվիրակման պայմանները, առանձին գործառույթների պատվիրակման սահմանափակումները, ինչպես նաև այն գործառույթների ցանկը, որոնց պատվիրակումն արգելվում է:»:

Հոդված 11. Օրենքի 20-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «ե» կետի «գործունեության կանոնակարգը» բառերը փոխարինել «աշխատանքի կանոնակարգը» բառերով.

2) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ե.1» կետով.

«ե.1) վճարահաշվարկային կազմակերպության գործունեության տնտեսական ծրագիրը՝ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ձևով.».

3) 1-ին մասի «զ» կետն ուժը կորցրած ճանաչել.

4) 1-ին մասի «է» կետը «բանկային երաշխիքը» բառերից հետո լրացնել «, եթե նման պահանջ սահմանված է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով» բառերով.

5) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «է.1» կետով.

«է.1) ընդհանուր կապիտալի նվազագույն չափի տնտեսական նորմատիվին համապատասխանելու վերաբերյալ փաստաթղթեր.».

6) 2-րդ մասն առաջին պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ պարբերությունով.

«Սույն մասով նախատեսված երկամսյա ժամկետը որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով կարող է Կենտրոնական բանկի որոշմամբ կասեցվել մինչև մեկ ամիս ժամկետով:».

7) 2-րդ մասի երկրորդ պարբերությունը և «ա», «բ», «գ», «դ» կետերն ուժը կորցրած ճանաչել.

8) 5-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

9) 6-րդ մասը «դիմումը չմերժվելու» բառերից հետո լրացնել «կամ երկամսյա ժամկետը կասեցնելու մասին վճարահաշվարկային կազմակերպությանը չտեղեկացնելու» բառերով.

10) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-ին մասով

«6.1. Եթե Կենտրոնական բանկ ներկայացված փաստաթղթերում առկա են ձևական սխալներ, որոնք կարող են շտկվել, ապա Կենտրոնական բանկը դրանք մատնացույց է անում դիմողին՝ նրան հնարավորություն ընձեռելով շտկելու այդ սխալները, կամ ինքն է շտկում դրանք՝ նախապես կամ հետագայում դիմողին իրազեկելով այդ մասին: Եթե Կենտրոնական բանկ ներկայացված փաստաթղթերն ամբողջական չեն, ապա Կենտրոնական բանկը դիմողին առաջարկում է սահմանված ժամկետում համալրել դրանք:»:

Հոդված 12. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 20.1-ին հոդվածով.

«Հոդված 20.1. Վճարահաշվարկային կազմակերպության լիցենզավորման մերժումը

1. Կենտրոնական բանկը կարող է մերժել վճարահաշվարկային կազմակերպության լիցենզավորումը, եթե՝

ա) ներկայացվել են կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ.

բ) ներկայացված փաստաթղթերը ամբողջական չեն կամ հակասում են Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին.

գ) կազմակերպության ընդհանուր կապիտալը փոքր է օրենքով սահմանված նվազագույն չափից.

դ) վճարահաշվարկային կազմակերպության գործունեության վայրը չի համապատասխանում Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված տեխնիկական հագեցվածության, տարածքային, ծրագրային, անվտանգության պահանջներին.

ե) վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարները չեն համապատասխանում Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված որակավորման և մասնագիտական համապատասխանելիության չափանիշներին.

զ) վճարահաշվարկային կազմակերպությունը չի կարող ապահովել վճարահաշվարկային ծառայությունների մատուցման համապատասխանությունը իր աշխատանքի կանոնակարգով սահմանված կարգին կամ պայմաններին:»:

Հոդված 13. Օրենքի 21-րդ հոդվածի վերնագրից և տեքստից հանել «և ներկայացուցչությունները», «և ներկայացուցչություններ», «և ներկայացուցչություններն», «և ներկայացուցչությունների», «կամ ներկայացուցչության», «կամ ներկայացուցչությունը» բառերը:

Հոդված 14. Օրենքի 23-րդ հոդվածում՝

1) վերնագրի «հիմնական տնտեսական նորմատիվը» բառերը փոխարինել «տնտեսական նորմատիվներ» բառերով.

2) 1-ին մասն ուժը կորցրած ճանաչել.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին, 1.2-րդ, 1.3-րդ և 1.4-րդ մասերով.

«1.1. Դրամական (փողային) փոխանցումների իրականացման լիցենզիա կամ վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգի և քլիրինգի իրականացման լիցենզիա ունեցող վճարահաշվարկային կազմակերպությունների համար սահմանվում է ընդհանուր կապիտալի նվազագույն չափի տնտեսական նորմատիվ՝ հարյուր միլիոն դրամի չափով:

1.2. Կենտրոնական բանկի խորհուրդը վճարահաշվարկային կազմակերպություններին համար կարող է սահմանել իրացվելիության տնտեսական նորմատիվ:

1.3. Տնտեսական նորմատիվների հաշվարկման կարգը և հաշվարկում մասնակցող տարրերի կազմը սահմանում է Կենտրոնական բանկի խորհուրդը:

1.4. Տնտեսական նորմատիվները պարտադիր են վճարահաշվարկային կազմակերպությունների համար:».

4) 2-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների համար սահմանել դրամական միջոցներ կամ արժեթղթեր դեպոնացնելու կամ անվերադարձելի բանկային երաշխիք ներկայացնելու պահանջ:».

5) 2-րդ մասի երրորդ պարբերության առաջին նախադասությունում «սահմանում է» բառերը փոխարինել «կարող է սահմանել» բառերով:

Հոդված 15. Օրենքի 26-րդ հոդվածի «բ» կետի «գործունեության կանոնակարգի» բառերը փոխարինել «աշխատանքի կանոնակարգի» բառերով:

Հոդված 16. Օրենքի 27-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 27. Վճարահաշվարկային կազմակերպությունների նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցները, վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիայի գործողության կասեցումը և ուժը կորցրած ճանաչելը

1. Օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները խախտելու համար Կենտրոնական բանկը վճարահաշվարկային կազմակերպության և (կամ) վերջինիս ղեկավարի նկատմամբ կարող է կիրառել հետևյալ պատասխանատվության միջոցները՝

ա) նախազգուշացում՝ խախտումները վերացնելու հանձնարարականով.

բ) տուգանք.

գ) որակավորման վկայականից զրկում.

դ) լիցենզիայի գործողության կասեցում.

ե) լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում:

2. Սույն հոդվածի 1-ին մասի «ա», «բ» և «գ» կետերով նախատեսված պատասխանատվության միջոցները կարող են կիրառվել միաժամանակ՝ օրենքների և այլ իրավական ակտերի յուրաքանչյուր պահանջի խախտման համար:

3. Խախտումը վերացնելու հանձնարարականը պարտադիր է վճարահաշվարկային կազմակերպության համար և կարող է նախատեսել խախտումը վերացնելու որոշակի ժամկետ:

4. Վճարահաշվարկային կազմակերպության նկատմամբ նշանակվող տուգանքի չափը չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը, իսկ վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարի նկատմամբ նշանակվող տուգանքի չափը չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկը՝ բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

5. Վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվում Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ:

6. Վճարահաշվարկային կազմակերպությունների և դրանց ղեկավարների նկատմամբ սույն հոդվածով սահմանված պատասխանատվության միջոցները կիրառվում են «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

7. Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է կասեցնել վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիայի գործողությունը կամ ուժը կորցրած ճանաչել վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիան նաև վճարահաշվարկային կազմակերպության համապատասխան դիմումի հիման վրա: Վճարահաշվարկային կազմակերպության դիմումը կարող է մերժվել, եթե լիցենզիայի գործողության կասեցումը կամ լիցենզիան ուժը կորցրած ճանաչելը կհանգեցնի ֆինանսական համակարգի ապակայունացմանը, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:

8. Կենտրոնական բանկի խորհուրդն ուժը կորցրած է ճանաչում վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիան նաև վճարահաշվարկային կազմակերպության լուծարման դեպքում:»:

Հոդված 17. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 27.1-ին հոդվածով.

«Հոդված 27.1. Վճարահաշվարկային կազմակերպության բանկային հաշիվներով գործառնությունների կասեցումը

1. Հաճախորդների նկատմամբ ստանձնած պարտավորությունները կատարելու համար անբավարար միջոցներ ունենալու դեպքում վճարահաշվարկային կազմակերպությունն այդ մասին մեկ օրվա ընթացքում ծանուցում է Կենտրոնական բանկին:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ծանուցումը ստանալու կամ հաճախորդների նկատմամբ ստանձնած պարտավորությունները կատարելու համար անբավարար միջոցներ ունենալու փաստը բացահայտելու դեպքում Կենտրոնական բանկի խորհուրդը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վճարահաշվարկային կազմակերպության բանկային հաշիվներով գործառնությունները կասեցնելու վերաբերյալ:

3. Վճարահաշվարկային կազմակերպության բանկային հաշիվներով գործառնությունները կասեցնելու մասին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ 1 օրվա ընթացքում, վճարահաշվարկային կազմակերպությունը հաշվետվություն է ներկայացնում Կենտրոնական բանկ՝ ֆիզիկական անձ պարտատերերի քանակի և պարտավորությունների ընդհանուր չափի վերաբերյալ:

4. Վճարահաշվարկային կազմակերպությունը պարտավորությունների կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում Կենտրոնական բանկ՝ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ձևով և պարբերականությամբ:

5. Ֆիզիկական անձ պարտատերերի նկատմամբ պարտավորություններն ամբողջությամբ կատարելուց հետո վճարահաշվարկային կազմակերպությունը եռօրյա ժամկետում այդ մասին տեղեկացնում է Կենտրոնական բանկին:

6. Կենտրոնական բանկը սույն հոդվածի 3-րդ մասում նշված հաշվետվությունը վերլուծելուց հետո անհրաժեշտության դեպքում մեկօրյա ժամկետում տեղում ստուգում կատարելու միջոցով հետևում է պարտավորությունների մարման գործընթացի կազմակերպմանը:»:

Հոդված 18. Եզրափակիչ դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ կետով լրացվող 1.1-ին մասի, որն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հոկտեմբերի 1-ից:

2. Մինչև 2012 թվականի հոկտեմբերի 1-ը վճարահաշվարկային կազմակերպությունների համար գործում են ընդհանուր կապիտալի նվազագույն չափի հետևյալ նորմատիվները՝

1) 2011 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2012 թվականի ապրիլի 1-ը՝ 30 միլիոն դրամ.

2) 2012 թվականի ապրիլի 1-ից մինչև 2012 թվականի հոկտեմբերի 1-ը՝ 70 միլիոն դրամ:

3. Առանց Կենտրոնական բանկի թույլտվության վճարահաշվարկային համակարգին անդամակցած կազմակերպությունները սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից համարվում են Կենտրոնական բանկի թույլտվությունը ստացած:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
6 մայիսի 2011 թ., Երևան, ՀՕ-131-Ն

«Վարկային կազմակերպությունների մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին[**]

Հոդված 1. «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 29-ի ՀՕ-359-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի «շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձանց» բառերը փոխարինել «շուկայի մասնագիտացված մասնակիցների» բառերով, իսկ «ներդրումային ընկերությունների,» բառերը հանել:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածում 3-րդ մասի «բանկերի, վարկային կազմակերպությունների և ներդրումային ընկերությունների» բառերը փոխարինել «բանկերի և վարկային կազմակերպությունների» բառերով:

Հոդված 3.

1) 1-ին մասի «դ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«դ) թողարկել արժեթղթեր, ինչպես նաև իր հաշվին և իր անունից արժեթղթերով գործարքներ կատարել.».

2) 1-ին մասի «ե» կետից հանել «, պետական պարտատոմսերի շուկայում իրականացնել մասնագիտացված գործունեություն (դիլերային, բրոքերային, գործակալական, ենթապահառուական)» բառերը.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին մասով.

«3.1. Վարկային կազմակերպություններին արգելվում է մատուցել «Արժեթղթերի շուկայի մասին»[***] Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված ներդրումային կամ 26-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ոչ հիմնական ծառայությունները, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի «դ» կետով նախատեսված գործառնությունների: Կենտրոնական բանկը կարող է լրացուցիչ պահանջներ սահմանել վարկային կազմակերպությունների կողմից արժեթղթերով գործարքներ կատարելու համար:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը լիցենզավորված վարկային կազմակերպությունները պարտավոր են սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից վեց ամսվա ընթացքում իրենց գործունեությունը համապատասխանեցնել սույն օրենքի պահանջներին:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
6 մայիսի 2011 թ., Երևան, ՀՕ-132-Ն

** ՀՀՊՏ 2002 N 23 (198), 03.07.02:*

*** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2011 թվականի ապրիլի 14-ին (ՀՀՊՏ N 27 (830), 13.05.11):

**** ՀՀՊՏ 2007 N 53 (577), 31.10.07:*

«Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին***

Հոդված 1. «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի հոկտեմբերի 22-ի ՀՕ-185-Ն օրենքի ամբողջ տեքստից հանել «, ներդրումային ընկերություններ» բառերը՝ համապատասխան հոլովաձևերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
6 մայիսի 2011 թ., Երևան, ՀՕ-133-Ն

** ՀՀՊՏ 2008 N 69 (659), 26.11.08:*
*** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2011 թվականի ապրիլի 14-ին (ՀՀՊՏ N 27 (830), 13.05.11):

«Արժեթղթերի շուկայի մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին[**]

Հոդված 1. «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 27-րդ կետից հանել «և վարկային կազմակերպությունը» բառերը:

Հոդված 2. Օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ կետն ուժը կորցրած ճանաչել

Հոդված 3. Օրենքի 27-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին մասով.

«3.1. Վարկային կազմակերպությունները կարող են իրականացնել ներդրումային ծառայություններ, ինչպես նաև սույն օրենքի 26-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ոչ հիմնական ծառայություններ բացառապես «Վարկային կազմակերպությունների մասին»[***] Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 3.1-ին մասի շրջանակներում:»:

Հոդված 4. Օրենքի 35-րդ հոդվածում՝

1) վերնագրից և տեքստից հանել «և վարկային կազմակերպությունները» և «, վարկային կազմակերպությունը» բառերն իրենց հոլովաձևերով.

2) 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Օրենքի 50-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «և վարկային կազմակերպությունների» բառերը:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը լիցենզավորված ներդրումային ընկերությունները պարտավոր են սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից վեց ամսվա ընթացքում իրենց գործունեությունը համապատասխանեցնել սույն օրենքի պահանջներին:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
6 մայիսի 2011 թ., Երևան, ՀՕ-134-Ն

** ՀՀՊՏ 2007 N 53 (577), 31.10.07:*

*** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2011 թվականի ապրիլի 14-ին (ՀՀՊՏ N 27 (830), 13.05.11):

**** ՀՀՊՏ 2002 N 23 (198), 03.07.02:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Վերաֆինանսավորման տոկոսադրույքը*** անփոփոխ է թողնվել՝ 8.5% (որոշում թիվ 127Ա):

- ***Գրավատան կազմակերպման լիցենզիաներ են տրամադրվել*** «Մաստեր Կրեդիտ» և «Մաքս Կրեդիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին (որոշումներ թիվ 133Ա, 134Ա):

- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «Սուփրա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 136Ա):

- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «Միևարտ Լայն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատան կազմակերպման և «Ադալև Ռիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության լիցենզիաները (որոշումներ թիվ 152Ա, 153Ա):

- ***Գրանցվել են*** «Առաջին հիփոթեքային ընկերություն» և «Մալաթիա» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների՝ «Կենտրոն», «Ռեսո» և «Կիլիկիա», «Ռեսո» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության՝ «Սևան», «Աբովյան», «Եղեգնաձոր», «Վանաձոր», «Ապարան», «Նոյեմբերյան» ներկայացուցչությունները, ինչպես նաև «Հայբիզնեսբանկ» և «Յունիբանկ» փակ բաժնետիրական ընկերությունների՝ «Աբովյան» և «Տաշիր», «Կինոնաիրի», «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերության «Նուբարաշեն» և «Գավառ» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/448Ա, 1/499Ա, 1/459Ա, 1/503Ա-1/505Ա, 1/534Ա):

- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 4 փակ բաժնետիրական, 7 սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, 1 գրավատան և 3 արտարժույթի փոխանակման կետերի նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 104900000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/434Ա, 1/516Ա, 1/517Ա, 1/541Ա, 1/454Ա, 1/486Ա, 1487Ա, 1/515Ա, 1540Ա, 1/542Ա, 1/554Ա, 1/555Ա, 1/549, 1/551Ա, 1/552Ա) և 3 սահմանափակ պատասխանատվությամբ, 1 փակ բաժնետիրական ընկերությունների և 4 արտարժույթի փոխանակման կետերի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/436Ա, 1/485Ա, 1/518Ա, 1/488Ա, 1/453Ա, 1/455Ա, 1/550Ա, 1/553Ա):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով ապահովել «մեկ պատուհան» սկզբունքի իրականացումը, այն է՝ մեկ մարմնի կողմից կազմակերպության գրանցման հետ կապված բոլոր գործառույթների իրականացումը, այդ թվում՝ կազմակերպությանը հարկ վճարողի հաշվառման համարի տրամադրումը, հիմք ընդունելով «Կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի ««Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ը հաստատելու մասին» թիվ 145-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ի Հավելված 1-ի ենթահավելված 9-ը և ենթահավելված 10-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
4 ապրիլի 2011 թ., N 77-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2011 թ. մարտի 29-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 6.05.2011 թ. (ՀՀԳՏ N11 (394), 16.05.2011):

Հավելված

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի մարտի 29-ի
թիվ 77-Ն որոշմամբ

Ենթահավելված 9

«Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ի Հավելված 1-ի

Ենթահավելված 9



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ԲԱՆԿԻ ԳՐԱՆՑՄԱՆ
ՎԿԱՅԱԿԱՆ

Ք. ԵՐԵՎԱՆ

Գրանցված է
ՀՀ կենտրոնական բանկի նախագահի
_____ թվականի թիվ _____ որոշմամբ

ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ԹԻՎ _____

Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների՝ սույն վկայականը տրվում է

_____ բանկին
(անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը)

_____
(բանկի գտնվելու վայրը)

Գրանցման համարը _____

Գրանցման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը _____

Հարկ վճարողի հաշվառման համարը _____

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ _____

_____ **20__ թ.**

Կ.Տ.

Ենթահավելված 10

«Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ի Հավելված 1-ի



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Ք. ԵՐԵՎԱՆ

Գրանցված է
ՀՀ կենտրոնական բանկի նախագահի
_____ թվականի թիվ _____ որոշմամբ

ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ԹԻՎ ____

Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների՝ սույն վկայականը տրվում է

_____ օտարերկրյա բանկին
(անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը)

_____ մասնաճյուղ
(օտարերկրյա բանկի մասնաճյուղի գտնվելու վայրը)

Գրանցման համարը _____

Գրանցման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը _____

Հարկ վճարողի հաշվառման համարը _____

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ _____

_____ **20__ թ.**

Կ.Տ.

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 1-ի թիվ 194-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով ապահովել «մեկ պատուհան» սկզբունքի իրականացումը, այն է՝ մեկ մարմնի կողմից կազմակերպության գրանցման հետ կապված բոլոր գործառույթների իրականացումը, այդ թվում՝ կազմակերպությանը հարկ վճարողի հաշվառման համարի տրամադրումը, հիմք ընդունելով «Կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 1-ի ««Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման, վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցման, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման ու գրանցման կարգը, վարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգը, վարկային կազմակերպությունների գործունեության վայրի և տեխնիկական հագեցվածության պահանջները» կանոնակարգ 13-ը հաստատելու մասին» թիվ 194-Ն որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման, վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցման, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման ու գրանցման կարգը, վարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգը, վարկային կազմակերպությունների գործունեության վայրի և տեխնիկական հագեցվածության պահանջները» կանոնակարգ 13-ի հավելվածի 5-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
4 ապրիլի 2011 թ., N 78-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2011 թ. մարտի 29-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 6.05.2011 թ. (ՀՀԳՏ N11 (394), 16.05.2011):

Հավելված

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի մարտի 29-ի
թիվ 78-Ն որոշմամբ

Հավելված 5

«Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման, վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցման, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման ու գրանցման կարգը, վարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգը, վարկային կազմակերպությունների գործունեության վայրի և տեխնիկական հագեցվածության պահանջները» կանոնակարգ 13-ի



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՎԱՐԿԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Ք. ԵՐԵՎԱՆ

Գրանցված է
ՀՀ կենտրոնական բանկի նախագահի
_____ թվականի թիվ _____ որոշմամբ

ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ԹԻՎ _____

Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների՝ սույն վկայականը տրվում է

_____ վարկային կազմակերպությանը
(վարկային կազմակերպության անվանումը, տիպը (խումբը) և կազմակերպաիրավական ձևը)

_____
(վարկային կազմակերպության գտնվելու վայրը)

Գրանցման համարը _____

Գրանցման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը _____

Հարկ վճարողի հաշվառման համարը _____

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ _____

_____ **20__ թ.**

Կ.Տ.

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով ապահովել «մեկ պատուհան» սկզբունքի իրականացումը, այն է՝ մեկ մարմնի կողմից կազմակերպության գրանցման հետ կապված բոլոր գործառույթների իրականացումը, այդ թվում՝ կազմակերպությանը հարկ վճարողի հաշվառման համարի տրամադրումը, հիմք ընդունելով «Կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի առաջին պարբերությունը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի ««Ապահովագրական և ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզավորումը, ապահովագրական գործակալի հաշվառումը, Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի և ներկայացուցչության գրանցումը, ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ապահովագրական ընկերության գործունեության գործարար ծրագրի ձևը, ներկայացման կարգը և ժամկետները, ապահովագրական ընկերության և ապահովագրական բրոքերային ընկերության ղեկավարների ու պատասխանատու անձանց որակավորումը, ապահովագրական ընկերության ղեկավարներին, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց ներկայացվող մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշները, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը, ապահովագրական ընկերության ղեկավարների, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց թեկնածուների մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 3/01-ը հաստատելու մասին» թիվ 344-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական և ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզավորումը, ապահովագրական գործակալի հաշվառումը, Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի և ներկայացուցչության գրանցումը, ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ապահովագրական ընկերության գործունեության գործարար ծրագրի ձևը, ներկայացման կարգը և ժամկետները, ապահովագրական ընկերության և ապահովագրական բրոքերային ընկերության ղեկավարների ու պատասխանատու անձանց որակավորումը, ապահովագրական ընկերության ղեկավարներին, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց ներկայացվող մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշները, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը, ապահովագրական ընկերության ղեկավարների, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց թեկնածուների մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 3/01-ի «7ա» և «7բ» հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի և Հավելված 2-ի (կցվում են):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
4 ապրիլի 2011 թ., N 79-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2011 թ. մարտի 29-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 6.05.2011 թ. (ՀՀԳՏ N11 (394), 16.05.2011):

Հավելված 1

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի մարտի 29-ի
թիվ 79-Ն որոշմամբ

Հավելված 7ա

«Ապահովագրական և ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզավորումը, ապահովագրական գործակալի հաշվառումը, Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի և ներկայացուցչության գրանցումը, ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ապահովագրական ընկերության գործունեության գործարար ծրագրի ձևը, ներկայացման կարգը և ժամկետները, ապահովագրական ընկերության և ապահովագրական բրոքերային ընկերության ղեկավարների ու պատասխանատու անձանց որակավորումը, ապահովագրական ընկերության ղեկավարներին, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց ներկայացվող մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշները, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը, ապահովագրական ընկերության ղեկավարների, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց թեկնածուների մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 3/01-ի Հավելվածի

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Ք. ԵՐԵՎԱՆ

Գրանցված է
ՀՀ կենտրոնական բանկի նախագահի
_____ թվականի թիվ _____ որոշմամբ

ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ԹԻՎ ____

Համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների՝ սույն վկայականը տրվում է

_____
(անվանումը, կազմակերպական-իրավական ձևը,գտնվելու վայրը)

_____

_____ ապահովագրական ընկերությանը

առ այն, որ այն գրանցված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում:

Գրանցման համարը _____

Գրանցման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը _____

Հարկ վճարողի հաշվառման համարը _____

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ _____

_____ **20__ թ.**

Կ.Տ.

Հավելված 2

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի մարտի 29-ի
թիվ 79-Ն որոշմամբ

Հավելված 7բ
«Ապահովագրական և ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզավորումը, ապահովագրական գործակալի հաշվառումը, Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի և ներկայացուցչության գրանցումը, ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ապահովագրական ընկերության գործունեության գործարար ծրագրի ձևը, ներկայացման կարգը և ժամկետները, ապահովագրական ընկերության և ապահովագրական բրոքերային ընկերության ղեկավարների ու պատասխանատու անձանց որակավորումը, ապահովագրական ընկերության ղեկավարներին, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց ներկայացվող մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշները, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը, ապահովագրական ընկերության ղեկավարների, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց թեկնածուների մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 3/01-ի Հավելվածի

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ (ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ) ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ (ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ) ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Ք. ԵՐԵՎԱՆ

Գրանցված է
ՀՀ կենտրոնական բանկի նախագահի
_____ թվականի թիվ _____ որոշմամբ

ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ԹԻՎ ____

Համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների՝ սույն վկայականը տրվում է

_____
(օտարերկրյա ապահովագրական ընկերության անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

_____ օտարերկրյա ապահովագրական ընկերությանը առ այն, որ _____ հասցեում գտնվող

_____
(օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության անվանումը)

մասնաճյուղը (ներկայացուցչությունը) գրանցված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում:

Գրանցման համարը _____

Գրանցման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը _____

Հարկ վճարողի հաշվառման համարը _____

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ _____

_____ **20__ թ.**

Կ.Տ.

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 14-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով ապահովել «մեկ պատուհան» սկզբունքի իրականացումը, այն է՝ մեկ մարմնի կողմից կազմակերպության գրանցման հետ կապված բոլոր գործառույթների իրականացումը, այդ թվում՝ կազմակերպությանը հարկ վճարողի հաշվառման համարի տրամադրումը, հիմք ընդունելով «Կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի առաջին պարբերությունը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի «Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» Կանոնակարգ 5/02-ը հաստատելու մասին» թիվ 14-Ն որոշմամբ հաստատված «Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02-ի Հավելված 5-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
4 ապրիլի 2011 թ., N 80-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2011 թ. մարտի 29-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 6.05.2011 թ. (ՀՀԳՏ N11 (394), 16.05.2011):

Հավելված

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի մարտի 29-ի
թիվ 80-Ն որոշմամբ

Հավելված 5
«Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում մշտանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02-ի Հավելվածի

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ
ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Ք. ԵՐԵՎԱՆ

Գրանցված է
ՀՀ կենտրոնական բանկի նախագահի
_____ թվականի թիվ _____ որոշմամբ

ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ԹԻՎ ____

Համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների՝ սույն վկայականը տրվում է

_____
(անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը, գտնվելու վայրը)

_____

Կենտրոնական դեպոզիտարիային առ այն, որ այն գրանցված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում:

Գրանցման համարը _____

Գրանցման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը _____

Հարկ վճարողի հաշվառման համարը _____

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ _____

_____ **20__ թ.**

Կ.Տ.

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 16-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով ապահովել «մեկ պատուհան» սկզբունքի իրականացումը, այն է՝ մեկ մարմնի կողմից կազմակերպության գրանցման հետ կապված բոլոր գործառույթների իրականացումը, այդ թվում՝ կազմակերպությանը հարկ վճարողի հաշվառման համարի տրամադրումը, հիմք ընդունելով «Կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի առաջին պարբերությունը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի ««Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ը հաստատելու մասին» թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ի «5ա» և «5բ» հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի և Հավելված 2-ի (կցվում են):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
4 ապրիլի 2011 թ., N81-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2011 թ. մարտի 29-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 6.05.2011 թ. (ՀՀԳՏ N11 (394), 16.05.2011):

Հավելված 1

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի մարտի 29-ի
թիվ 81-Ն որոշմամբ

Հավելված 5 ա

«Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում մշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ի Հավելվածի

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Ք. ԵՐԵՎԱՆ

Գրանցված է
ՀՀ կենտրոնական բանկի նախագահի
_____ թվականի թիվ _____ որոշմամբ

ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ԹԻՎ ____

Համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների՝ սույն վկայականը տրվում է

_____

(անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը, գտնվելու վայրը)

_____

_____ ներդրումային ընկերությանն առ այն, որ այն գրանցված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում:

Գրանցման համարը _____

Գրանցման ամսաթիվ, ամիս, տարեթիվ _____

Հարկ վճարողի հաշվառման համարը _____

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ _____

«__» _____ 20__ թ.

Կ.Տ.

Հավելված 2

Հաստատված է

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի մարտի 29-ի
թիվ 81-Ն որոշմամբ

Հավելված 5 բ

«Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ի Հավելվածի

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ (ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ) ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ (ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ) ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Ք. ԵՐԵՎԱՆ

Գրանցված է
ՀՀ կենտրոնական բանկի նախագահի
_____ թվականի թիվ _____ որոշմամբ

ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ԹԻՎ _____

Համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների՝ սույն վկայականը տրվում է

_____

(օտարերկրյա ներդրումային ընկերության անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը, գտնվելու վայրը)

_____ օտարերկրյա ներդրումային ընկերությանը հասցեում գտնվող առ այն, որ _____

_____

(օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության անվանումը)

մասնաճյուղը (ներկայացուցչությունը) գրանցված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում:

Գրանցման համարը _____

Գրանցման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը _____

Հարկ վճարողի հաշվառման համարը _____

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ _____

«__» _____ 20__ թ.

Կ.Տ.

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 17-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով ապահովել «մեկ պատուհան» սկզբունքի իրականացումը, այն է՝ մեկ մարմնի կողմից կազմակերպության գրանցման հետ կապված բոլոր գործառույթների իրականացումը, այդ թվում՝ կազմակերպությանը հարկ վճարողի հաշվառման համարի տրամադրումը, հիմք ընդունելով «Կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի առաջին պարբերությունը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի ««Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ը հաստատելու մասին» թիվ 17-Ն որոշմամբ հաստատված «Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ի Հավելված 5-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
4 ապրիլի 2011 թ., N 82-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2011 թ. մարտի 29-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 6.05.2011 թ. (ՀՀԳՏ N11 (394), 16.05.2011):

Հավելված

Հաստատված է

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի մարտի 29-ի
թիվ 82-Ն որոշմամբ

Հավելված 5

«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ծևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ի Հավելվածի

ՕՊԵՐԱՏՈՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՕՊԵՐԱՏՈՐԻ
ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Ք. ԵՐԵՎԱՆ

Գրանցված է
ՀՀ կենտրոնական բանկի նախագահի
____ թվականի թիվ ____ որոշմամբ

ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ԹԻՎ ____

Համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների՝ սույն վկայականը տրվում է

_____

(անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը, գտնվելու վայրը)

_____ օպերատորին առ այն, որ այն գրանցված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում:

Գրանցման համարը _____

Գրանցման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը _____

Հարկ վճարողի հաշվառման համարը _____

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ _____

«__» _____ 20__ թ.

Կ.Տ.

Բանկի ղեկավար համարելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասը, 22-րդ հոդվածը, 23-րդ հոդվածի 8-րդ մասը, 41-հոդվածը, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 146-Ն որոշմամբ հաստատված «Բանկի հիմնական գործունեության հետ կապված կամ բանկի գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո աշխատող կամ բանկի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում ազդեցություն ունեցող աշխատակիցներին բանկի ղեկավար համարելու ուղեցույցի» 3-րդ կետի 3.1-րդ ենթակետը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ և 70-րդ հոդվածներով, նկատի ունենալով բանկի խորհրդի նախագահի և անդամների դերի կարևորությունը բանկի գործունեության ընդհանուր ղեկավարման բնագավառում, նպատակ ունենալով ապահովել բանկի խորհրդի նախագահի և անդամների որակավորման բարձր մակարդակ իրենց պաշտոնավարման ողջ ընթացքում՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման գործառույթներ իրականացնող աշխատակիցներին համարել բանկի ղեկավար:

2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի ««Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ը հաստատելու մասին» թիվ 145-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) նախաբանը «հոդվածները» բառից հետո լրացնել ««, Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասը» բառերով:

3. Որոշմամբ հաստատված «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 1) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Կանոնակարգ 1-ի 4-րդ կետը «ներքին աուդիտի ղեկավարը և անդամները,» բառերից հետո լրացնել «փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման գործառույթներ իրականացնող աշխատակիցները (այսուհետ՝ ներքին դիտարկումների մարմնի աշխատակից),» բառերով:

2) Կանոնակարգ 1-ը լրացնել 46.2-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«46.2. Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունենալուն նախնական համաձայնություն տալու ընթացքում Կենտրոնական բանկը գնահատում է նշանակալից մասնակիցների հնարավորությունը և պատրաստակամությունը՝ բանկի ֆինանսական վիճակի վատթարացման դեպքում (օրինակ՝ կապիտալի կտրուկ նվազում, իրացվելիության խնդիրների առաջացում, խոշոր վնասներ, արտակարգ իրավիճակներ) բանկին լրացուցիչ ֆինանսական օժանդակություն տրամադրելու ուղղությամբ:»:

3) Կանոնակարգ 1-ի 53-րդ կետը լրացնել 4-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4) Որակավորում ստացած բանկի խորհրդի նախագահը, խորհրդի անդամներն իրենց գործունեության հետագա տարիների ընթացքում Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ կարող են հրավիրվել լրացուցիչ հարցազրույցի՝ Կենտրոնական բանկի խորհրդի նիստում որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման նպատակով: Ընդ որում, լրացուցիչ հարցազրույցը կարող է իրականացվել ոչ հաճախ, քան երեք տարին մեկ անգամ, որի մասին բանկը տեղեկացվում է առնվազն 30 օր

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2011 թ. մարտի 29-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 6.05.2011 թ. (ՀՀԳՏ N11 (394), 16.05.2011):

առաջ: Լրացուցիչ հարցազրույցն իրականացվում է սույն կետով սահմանված ընթացակարգով: Լրացուցիչ հարցազրույցի արդյունքներով Կենտրոնական բանկի խորհուրդն ընդունում է որոշում՝ Կենտրոնական բանկի սահմանած չափանիշներին բանկի խորհրդի նախագահի կամ խորհրդի անդամի համապատասխանության կամ անհամապատասխանության վերաբերյալ: Կենտրոնական բանկի սահմանած չափանիշներին բանկի խորհրդի նախագահի կամ խորհրդի անդամի համապատասխանության վերաբերյալ Կենտրոնական բանկի խորհրդի որոշման ընդունման դեպքում բանկի խորհրդի նախագահի կամ խորհրդի անդամի որակավորումը համարվում է երկարաձգված: Հակառակ դեպքում բանկի խորհրդի նախագահը կամ խորհրդի անդամը համարվում է որակավորում չունեցող:»:

4) Կանոնակարգ 1-ի 10.3-րդ գլխի վերնագիրը «ներքին աուդիտի անդամի,» բառերից հետո լրացնել «բանկի ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի,» բառերով:

5) Կանոնակարգ 1-ի 56-րդ կետը լրացնել 6-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6) բանկի ներքին դիտարկումների մարմնի աշխատակից:»:

6) Կանոնակարգ 1-ի 60-րդ կետում.

ա. 2-րդ ենթակետի առաջին նախադասությունը «հրապարակման» բառից հետո լրացնել «(բացառությամբ բանկի ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցների որակավորման քննության թեստերի, որոնք ենթակա չեն հրապարակման)» բառերով,

բ. 3-րդ ենթակետը լրացնել «զ» պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«զ. բանկի ներքին դիտարկումների մարմնի աշխատակից (80 հարց):»:

7) Կանոնակարգ 1-ի 70-րդ կետի երկրորդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Եթե բանկի մասնաճյուղն իրականացնում է միայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետի «ե» և/կամ «ժ» ենթակետերով նախատեսված ֆինանսական գործառնությունները, ապա բանկի մասնաճյուղը պետք է ունենա կառավարիչ, որը կարող է միաժամանակ հանդիսանալ նաև այլ մասնաճյուղերի կառավարիչ, իսկ եթե բանկի մասնաճյուղն իրականացնում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետի «ե» և/կամ «ժ» ենթակետերով նախատեսված ֆինանսական գործառնություններից բացի այլ գործառնություններ, ապա այդ մասնաճյուղը պետք է ունենա կառավարիչ, և այդ կառավարիչը չի կարող միաժամանակ հանդիսանալ նաև այլ մասնաճյուղերի կառավարիչ:»:

8) Կանոնակարգ 1-ի 73-րդ կետը լրացնել 7-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«7) բանկի ներքին դիտարկումների մարմնի աշխատողը պետք է ունենա.

ա. բարձրագույն կրթություն կամ Հայաստանի Հանրապետության կամ միջազգային ճանաչում ունեցող մասնագիտական (ֆինանսական ոլորտի) որակավորման վկայական,

բ. առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ (ֆինանսական ոլորտում կամ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում),

գ. Կենտրոնական բանկի կողմից տրամադրված՝ բանկի ներքին աուդիտի ղեկավարի, ներքին աուդիտի անդամի կամ ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի որակավորման վկայական կամ Համապատասխանության միջազգային ասոցիացիայի կողմից տրամադրված համապատասխանության դիպլոմ կամ հավաստագիր կամ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից կազմակերպված՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում համապատասխանության գործնական դասընթացի որակավորում, որոնք տրամադրվել են վերջին երեք տարիների ընթացքում:»:

9) Կանոնակարգ 1-ի 74-րդ կետը լրացնել «թ» ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«թ) փոխկապակցված են տվյալ բանկի ղեկավարների հետ (միայն ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցների թեկնածուների համար):»:

10) Կանոնակարգ 1-ի 75-րդ կետի «բ» ենթակետը «վկայականից,» բառից հետո լրացնել «այդ թվում՝ սույն կանոնակարգի 73-րդ կետի 7-րդ ենթակետի «գ» պարբերությամբ սահմանված դիպլոմից (հավաստագրից) կամ որակավորումից,» բառերով:

11) Կանոնակարգ 1-ը լրացնել 76.2-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«76.2. Բանկի ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի պաշտոնում նշանակված անձին Կենտրոնական բանկում գրանցումից հանելու դեպքում բանկը պարտավոր է նշանակել ժամանակավոր պաշտոնակատար և, սույն կետում նախատեսված փաստաթղթերից բացի, այդ մասին բանկի ներքին դիտարկումների մարմնի աշխատակցին Կենտրոնական բանկում գրանցումից հանելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ծանուցում ներկայացնել Կենտրոնական բանկ:»:

12) Կանոնակարգ 1-ի 80-րդ կետի 3-րդ նախադասությունը «ղեկավարի» բառից հետո լրացնել «ժամանակավոր» բառով:

13) Կանոնակարգ 1-ի 82.2 կետի աղյուսակը շարադրել նոր խմբագրությամբ.

Գիտելիքների և ունակությունների բնագավառները	Բանկի գործադիր մարմնի (կառավարման կոլեգիայի, գործադիր տնօրենի (կառավարչի), տնօրենների խորհրդի (վարչության) անդամների, ինչպես նաև բանկի գլխավոր հաշվապահի կամ նրանց պաշտոնակատարների	Բանկի և օտարերկրյա բանկի մասնաճյուղի գլխավոր կառավարչի, գլխավոր հաշվապահի կամ նրանց պաշտոնակատարների	Բանկի ներքին աուդիտի ղեկավար, ներքին աուդիտի անդամ	Բանկի մասնաճյուղի կառավարիչ	Բանկի մասնաճյուղի վարկային կոմիտեի անդամ	Բանկի տնօրենների խորհրդի ձախագահ, խորհրդի անդամներ	Բանկի ներքին դիտարկումների մարմնի աշխատող
1	2	3	4	5	6	7	8
1, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք							
1) Ընդհանուր դրույթներ	+	+	+	-	+	+	+
2) Ֆինանսական դրույթներ	+	+	+	-	+	-	+
3) Կենտրոնական բանկի կառավարումը	+	+	+	-	+	+	+
4) Կենտրոնական բանկի փոխհարաբերությունները Հայաստանի Հանրապետության պետական մարմինների հետ	+	+	+	-	+	-	+
5) Կենտրոնական բանկի փոխհարաբերությունները բանկերի և այլ անձանց հետ	+	+	+	-	+	-	+
6) Կենտրոնական բանկի կողմից իրականացվող ստուգումները, վերահսկողությունը, ուսումնասիրությունները և լիցենզավորված անձանց պատասխանատվության ենթարկելու կարգն ու պայմանները	+	+	+	+	+	+	+
7) Հայաստանի Հանրապետության արժույթը	+	+	+	+	+	-	+
8) Արժութային կարգավորումը, վերահսկողությունը և գործառնությունները: Միջազգային պահուստները	+	+	+	-	+	-	+
9) Լրացուցիչ դրույթներ	+	+	+	-	+	-	+
10) Կենտրոնական բանկի հիմնական խնդիրը և այլ խնդիրները	+	+	+	+	-	+	+
11) Կենտրոնական բանկի կողմից բանկերի վարկավորումը	+	-	-	+	-	+	+
12) Բանկերի պարտադիր պահուստները	+	+	+	+	-	-	+
2. «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք							
1) Ընդհանուր դրույթներ	+	+	+	+	+	+	+
2) Բանկերի կազմակերպական-իրավական տեսակները, կառուցվածքը և կառավարումը	+	+	+	+	+	+	+
3) Բանկային գործունեության լիցենզավորման կարգը	+	+	+	+	+	+	+
4) Բանկային գործունեության կարգավորումը	+	+	+	+	+	+	+
5) Բանկային գործունեության հիմնական և այլ տնտեսական նորմատիվները	+	+	+	+	+	+	+
6) Հաշվառումը, հաշվետվությունները և վերահսկողությունը	+	+	+	+	+	-	+
7) Օրենսդրության խախտումները, և դրանց համար կիրառվող պատժամիջոցները	+	+	+	+	+	+	+
8) Բանկի վերակազմակերպումը	+	+	+	+	+	+	+
9) Բանկերի լուծարումը	+	+	+	+	+	+	+
3. «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք							
1) Ընդհանուր դրույթներ	+	+	+	-	-	+	+
2) Ժամանակավոր ադմինիստրացիա	+	+	+	-	-	+	+
3) Բանկի ֆինանսական առողջացման ծրագիրը	+	+	+	-	-	+	+
4) Բանկի սնանկության վարույթի առանձնահատկությունները	+	+	+	-	-	+	+
5) Սնանկ ճանաչված բանկի լուծարման ընթացակարգը	+	+	+	-	-	-	+
6) Ադմինիստրացիայի ղեկավարին և լուծարային կառավարչին ներկայացվող պահանջները	+	+	+	-	-	-	+
7) Եզրափակիչ դրույթներ	+	+	+	-	-	-	+

1	2	3	4	5	6	7	8
4. «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք							
1) Օրենքի կարգավորման առարկան և գործողության շրջանակները	+	+	+	+	+	+	+
2) Բանկային գաղտնիքի հասկացությունը, երրորդ անձինք	+	+	+	+	+	+	+
3) Բանկային գաղտնիքի հրապարակումը, հրապարակման արգելումը	+	+	+	+	+	+	+
4) Բանկային գաղտնիքի պահպանումը, տրամադրումը և շրջանառությունը բանկերի միջև	+	+	+	+	+	+	+
5) Տրամադրման ենթակա տեղեկությունների սահմանները, տրամադրման պահանջի մերժումը	+	+	+	+	+	-	+
6) Համցագործության մասին հայտնելու պարտականությունը	+	+	+	+	+	-	+
7) Օրենքի պահանջները խախտելու համար պատասխանատվությունը	+	+	+	+	+	+	+
5. «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենք							
1) Երաշխավորված բանկային ավանդը, երաշխավորված ավանդի չափերը	+	+	+	+	+	+	-
2) Երաշխավորված ավանդների հատուցումը	+	+	+	-	-	+	-
3) Երաշխիքային վճարները	+	+	+	-	-	+	-
4) Ավանդների երաշխավորման պայմանների և կարգի մասին հաճախորդներին տեղեկացնելը	+	+	+	-	-	-	-
5) Պատասխանատվությունը օրենքը խախտելու համար	+	+	+	-	-	-	-
6. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք							
1) Ընդհանուր դրույթներ	-	-	-	-	-	-	+
2) Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելումը	+	+	+	+	+	+	+
3) Լիազոր մարմինը	+	+	+	+	+	-	+
4) Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին օրենքի նպատակներով իրականացվող համագործակցությունը	+	+	+	+	+	-	+
5) Հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունը, հաշվետվություն տրամադրող անձանց ներքին հսկողության պահանջը	+	+	+	+	+	-	+
6) Հաշվետվություն տրամադրող անձանց ներքին իրավական ակտերը և ներքին դիտարկումների ստորաբաժանումը	-	-	-	-	-	-	+
7) Կասկածելի գործարար հարաբերությունների կամ գործարքների կասեցումը, դրանց իրականացման մերժումը և ահաբեկչության հետ կապված ֆինանսական միջոցների սառեցումը	+	+	+	+	+	+	+
8) Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին օրենքի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը և օրենսդրության խախտման համար կիրառվող պատասխանատվության միջոցները	-	-	-	-	-	-	+
9) Անցումային դրույթներ	-	-	-	-	-	-	+
10) Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի առանձնահատկությունները բանկերում	+	+	+	+	+	+	+
7. «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք							
1) Վճարահաշվարկային համակարգեր, դրանց գործունեության նկատմամբ վերահսկողությունը	+	+	+	+	+	-	+
2) Վճարահաշվարկային ծառայություններ	+	+	+	+	+	+	+
3) Վճարահաշվարկային ծառայություններ մատուցող անձինք	+	+	+	+	+	-	+
8. Այլ							
1) Արժութային կարգավորումը և վերահսկողությունը Հայաստանի Հանրապետությունում	+	+	+	+	+	-	+
2) Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները	+	+	+	+	+	+	-
3) Բանկերի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ հաշվետվությունների ներկայացումը	+	+	+	+	+	-	-
4) Բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստի ձևավորումը	+	+	+	+	+	-	-
5) Բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորում և օգտագործում	+	+	+	+	+	-	-
6) Ֆինանսական գործակիցներ	+	+	+	+	+	+	-
7) Բանկի շահութաբերության և եկամտաբերության ցուցանիշները	+	+	+	+	+	+	-
8) Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները	+	+	+	+	+	+	+
9) Վարկային ռեգիստրին տեղեկությունների տրամադրումը, օգտագործումը և պահպանումը	+	+	+	+	+	-	-
10) Համախմբված հաշվետվությունների կազմման կարգը	+	+	+	-	-	+	-

1	2	3	4	5	6	7	8
11) Բանկերի կողմից իրենց վերաբերյալ տեղեկությունների հրապարակումը	+	+	+	-	-	+	-
12) Բանկերի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ հեռանկարային զարգացման ծրագրերի ներկայացման կարգը	+	-	+	-	-	+	-
13) Առևտրային բանկերի կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգը	+	+	+	-	-	+	-
14) Բանկային ռիսկեր, դրանց տեսակները, կառավարումը	+	+	+	+	+	+	-
15) Բանկային ռիսկերի գնահատման մեթոդները (օրինակ՝ ԳԱՓ, ՎԱՌ, Դյուրացիա)	+	-	+	-	-	-	-
16) Իրավիճակային խնդիրներ (օրինակ՝ պարտատոմսերի եկամտաբերություն, իրացվելիության ճեղքվածք, Դյուրացիա)	+	-	+	-	-	-	-
17) Քաղաքացիական օրենսգիրք (գրավի իրավունք, վարձակալություն, վարկ, ֆինանսավորում դրամական պահանջի զիջման դիմաց (ֆակտորինգ), բանկային ավանդ, բանկային հաշիվ, հաշվարկներ, գույքի հավատարմագրային կառավարում, արժեթղթեր, սեփականության իրավունք)	+	+	+	+	+	+	+
18) Ածանցյալ գործիքներ	+	+	+	+	+	-	-
19) Ակտիվների և պասիվների կառավարում (իրացվելիության, եկամտաբերության, արտարժույթի դիրքի և ակտիվապասիվային գործառնությունների կառավարում)	+	-	+	+	-	-	-
20) Ֆինանսական գործառնություններ	+	-	+	+	-	-	-
21) Բանկի ակտիվային գործառնությունների տարանջատումը պասիվայինից	+	+	+	+	+	-	-
22) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 31.07.2008 թ. թիվ 231-Ն որոշմամբ հաստատված «Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ թիվ 001 հաշվետվական ձևը, դրա տրամադրման կարգը և ժամկետները»	-	-	-	-	-	-	+
23) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի 11.09.2008 թ. թիվ 1-913Ա որոշմամբ հաստատված «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի վերաբերյալ տիպաբանությունների» ուղեցույց	-	-	-	-	-	-	+
24) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի 03.09.2008 թ. թիվ 1/886Ա որոշմամբ հաստատված «Կասկածելի գործարքների չափանիշների վերաբերյալ» ուղեցույց	-	-	-	-	-	-	+
25) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 190-րդ և 217.1-րդ հոդվածները	-	-	-	-	-	-	+
26) Գործնական (իրավիճակային) խնդիրներ՝ կապված փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հետ	-	-	-	-	-	-	+
27) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 09.09.2008 թ. թիվ 269-Ն որոշմամբ հաստատված «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ֆինանսական հաստատությունների համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ» կանոնակարգ	-	-	-	-	-	-	+
28) Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում գործող միջազգային փաստաթղթեր և միջազգային կառույցներ	-	-	-	-	-	-	+
9. Հաշվապահական հաշվառում և հարկային դաշտ							
1) «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք	+	+	+	+	+	-	+
2) Հաշվապահական հաշվառման կարգավորումը	+	+	+	+	+	+	+
3) Հաշվապահական հաշվառման կազմակերպումը և վարումը	+	+	+	+	+	-	+
4) Ֆինանսական հաշվետվություններ և դրանց տարրերը	+	+	+	+	+	-	+
5) Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները	-	+	+	-	+	-	+
6) Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հիմունքները	+	+	+	+	+	+	+
7) Բանկերի կողմից իրականացվող գործառնությունների հաշվապահական ձևակերպումները	-	+	+	-	+	-	+
8) Հիմնական միջոցների և մաշվածության հաշվառումը, վերագնահատումը	-	+	+	-	+	-	+
9) Ակտիվների և պարտավորությունների գույքագրում	-	+	+	-	+	-	+
10) Ակտիվների և պարտավորությունների գնահատում	-	+	+	-	+	-	+
11) Հարկ վճարողների իրավունքները և պարտականությունները	+	+	+	+	+	+	+
12) Հարկային արտոնությունների ձևերը, ավելացված արժեքի հարկի արտոնությունները Հայաստանի Հանրապետության բանկերի համար	+	+	+	-	-	-	+
13) Շահութահարկի հաշվարկման կարգը, դրույքաչափերը և վճարումը	+	+	+	-	-	-	+
14) Հարկային պարտավորություններից ավելի բյուջե վճարված գումարները հարկ վճարողին վերադարձնելու կարգը	+	+	+	-	-	-	+

1	2	3	4	5	6	7	8
15) Բանկերի պատասխանատվությունը հարկային օրենսդրության խախտման համար	+	+	+	-	-	-	+
16) Եկամուտ և ծախս համարվող տարրերը՝ ըստ «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի	+	+	+	+	+	-	+
17) Բանկում գույքահարկով հարկվող օբյեկտներ	+	+	+	+	+	-	+
10. Դրամավարկային քաղաքականություն							
1) Դրամավարկային քաղաքականության տեսակները, նպատակը և գործիքները	+	-	-	-	-	-	-
2) Ազգային հաշիվների համակարգը	+	-	-	-	-	-	-
3) Նախորդ տարիների մակրոտնտեսական հիմնական ցուցանիշները	+	-	-	-	-	-	-
4) Սպառողական գների ինդեքս	+	-	-	-	-	-	-
5) Վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդ	+	-	-	-	-	-	-
11. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք՝ ըստ հետևյալ գլուխների							
1) Ընդհանուր դրույթներ	+	-	-	-	-	-	+
2) Ընկերության ստեղծումը, վերակազմակերպումը և լուծարումը	+	-	-	-	-	-	+
3) Կանոնադրական կապիտալը, ընկերության բաժնետոմսերը և այլ արժեթղթերը, ընկերության զուտ ակտիվները	+	-	-	-	-	-	+
4) Ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը	+	-	-	-	-	-	+
5) Ընկերության շահութաբաժինները	+	-	-	-	-	-	+
6) Ընկերության բաժնետոմսերի ռեեստրը	+	-	-	-	-	-	+
7) Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը ընկերության կողմից	+	-	-	-	-	-	+
8) Խոշոր գործարքները	+	-	-	-	-	-	+
9) Ընկերության գործարքներում շահագրգռվածությունը	+	-	-	-	-	-	+
10) Ընկերության ժողովը, խորհուրդը և գործադիր մարմինը	+	-	-	-	-	-	+
11) Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը	+	-	-	-	-	-	+
12) Հաշվառումը և հաշվետվությունները, ընկերության մասին տեղեկությունները	+	-	-	-	-	-	+
12. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք՝ ըստ հետևյալ գլուխների							
1) Ընդհանուր դրույթներ	+	-	-	-	-	-	+
2) Ընկերության ստեղծումը	+	-	-	-	-	-	+
3) Ընկերության մասնակիցները	+	-	-	-	-	-	+
4) Ընկերության կանոնադրական կապիտալը	+	-	-	-	-	-	+
5) Ընկերության կառավարումը	+	-	-	-	-	-	+
6) Ընկերության վերակազմակերպումը և լուծարումը	+	-	-	-	-	-	+
13. «Բանկային ավանդների ներգրավման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք՝ ըստ հետևյալ հոդվածների							
1) Հրապարակման ենթակա տեղեկատվությունը	+	-	+	+	-	-	-
2) Տեղեկատվական ամփոփագրերը	+	-	+	+	-	-	-
3) Տեղեկատվական ամփոփագրերի տրամադրումն ու հրապարակումը	+	-	+	+	-	-	-
4) Հաշվի քաղվածքները	+	-	+	+	-	-	-
5) Տոկոսների հաշվարկը	+	+	+	+	+	-	-
6) Բանկի և ավանդատուի հաղորդակցումը	+	-	+	+	-	-	-
7) Ավանդատուների իրավունքների դատական, արբիտրաժային, ինչպես նաև Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով պաշտպանությունը	+	-	+	+	-	-	-
8) Բանկի պատասխանատվությունը	+	-	+	+	-	-	-
9) Բանկի պատասխանատվությունը ավանդատուի առջև	+	-	+	+	-	-	-
14. «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք՝ ըստ հետևյալ գլուխների							
1) Ընդհանուր դրույթներ	+	-	+	+	-	-	-
2) Կրեդիտավորման պայմանագրերը	+	-	+	+	-	-	-
3) Սպառողի իրավունքները	+	-	+	+	-	-	-
4) Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկումը	+	+	+	+	+	-	-
5) Գովազդը և հաղորդակցումը	+	-	+	+	-	-	-
6) Սպառողների իրավունքների պաշտպանությունը, վերահսկողությունը և օրենքը խախտելու համար պատասխանատվությունը	+	-	+	+	-	-	-
15. «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք՝ ըստ հետևյալ գլուխների							
1) Հիմնական դրույթներ	+	-	+	+	-	+	-
2) Պահանջները և դրանց քննության կարգը	+	-	+	+	-	-	-
3) Պատասխանատվությունը օրենքը խախտելու համար	+	-	+	+	-	-	-

14) Կանոնակարգ 1-ի 86-րդ կետը լրացնել «դ» ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«դ) մասնաճյուղի գործունեության նոր կամ վերանայված տնտեսական ծրագիր առաջիկա երկու տարիների համար կամ հիմնավորում նոր տնտեսական ծրագիր կազմելու կամ առկա ծրագիրը վերանայելու անհրաժեշտության բացակայության վերաբերյալ (միայն բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղերի գործունեության վայրի փոփոխությունը գրանցելու դեպքում):»:

15) Կանոնակարգ 1-ը լրացնել նոր 86.3-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«86.3. Սույն կանոնակարգի գլուխ 13-ով սահմանված տարածքի և տեխնիկական հագեցվածության յուրաքանչյուր փոփոխության դեպքում բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը 10 աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր հայտնում է Կենտրոնական բանկին՝ ներկայացնելով նաև բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի կամ բանկի մասնաճյուղի տարածքի և տեխնիկական հագեցվածության՝ սույն կանոնակարգի 13-րդ գլխով սահմանված չափանիշներին համապատասխանելու մասին փաստաթղթերը և հայտարարագիր՝ համաձայն սույն կանոնակարգի ենթահավելված 25-ի:»:

16) Կանոնակարգ 1-ի 89-րդ կետի «ա» ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«ա) բանկին (իսկ օտարերկրյա բանկի մասնաճյուղի դեպքում՝ հիմնադիր բանկին) սեփականության իրավունքով պատկանող, վարձակալությամբ կամ անհատույց օգտագործման իրավունքով վերցված առանձնացված տարածք: Այն դեպքում, երբ բանկերը, Կենտրոնական բանկի նախնական համաձայնության հիման վրա, կնքել են միացման պայմանագիր, ապա միացվող բանկերի գլխամասային գրասենյակների և տարածքային ստորաբաժանումների միջև տարածքների առանձնացվածության պահանջը պարտադիր չէ միացման պայմանագիրը կնքելու օրվանից սկսած 6 ամսվա ընթացքում:»:

17) Կանոնակարգ 1-ի հավելված 1-ի ենթահավելված 4-ի 3.1 տողը լրացնել նոր կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

• բանկի ներքին դիտարկումների մարմնի աշխատակից

18) Կանոնակարգ 1-ի հավելված 1-ի ենթահավելված 4-ը լրացնել 3.4 տողով՝ հետևյալ բովանդակությամբ.

3.4. Եթե հանդիսանում եք բանկի ներքին դիտարկումների մարմնի աշխատակից, նշե՛ք ստորաբաժանման և պաշտոնի անվանումը.

19) Կանոնակարգ 1-ի հավելված 1-ի ենթահավելված 7-ը լրացնել 7.4 տողով՝ հետևյալ բովանդակությամբ.

7.4. Արդյո՞ք կազմակերպությունը պատրաստ է բանկի	Այո		Ոչ		Այլ
ֆինանսական վիճակի վատթարացման դեպքում (կապիտալի կտրուկ նվազում, իրացվելիության խնդիրների առաջացում, խոշոր վնասներ, արտակարգ իրավիճակներ) տրամադրել լրացուցիչ ֆինանսական օժանդակություն: «Այլ» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:					

20) Կանոնակարգ 1-ի հավելված 1-ի ենթահավելված 8-ը լրացնել 10.3-րդ տողով՝ հետևյալ բովանդակությամբ.

10.3. Դուք պատրա՞ստ եք բանկի ֆինանսական	Այո		Ոչ		Այլ
վիճակի վատթարացման դեպքում (կապիտալի կտրուկ նվազում, իրացվելիության խնդիրների առաջացում, խոշոր վնասներ, արտակարգ իրավիճակներ) տրամադրել լրացուցիչ ֆինանսական օժանդակություն: «Այլ» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:					

21) Կանոնակարգ 1-ի հավելված 1-ի ենթահավելված 11-ի Ձև 1-ը և Ձև 2-ը շարադրել նոր խմբագրությամբ.

Ձև 1

ՀԱՇՎԵԿՇՌԻ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐ

(կանխատեսումներ)

(հազար դրամ)

	Առաջիկա տարիներ	
	1-ին	2-րդ
ԱԿՏԻՎՆԵՐ		
Կանխիկ դրամական միջոցներ		
Հաշվարկներ բանկի և իր մասնաճյուղերի միջև		
Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներ		
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմակերպությունների նկատմամբ		
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ		
Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ		
Այլ գործառնությունների գծով ստացվելիք գումարներ, այդ թվում՝		
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ		
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ		
Հիմնական միջոցներ (հանած մաշվածքը)		
Ոչ նյութական ակտիվներ (հանած մաշվածքը)		
Այլ ակտիվներ		
Ընդամենը՝ ակտիվներ		
ՊԱՍԻՎՆԵՐ		
Բանկերից ներգրավված ավանդներ և ստացված վարկեր		
Հաշվարկներ բանկի և իր մասնաճյուղերի միջև		
Պարտավորություններ այլ ավանդատուների նկատմամբ		
Կրեդիտորական պարտքեր և տարանցիկ հաշիվներ		
Պահուստներ		
Այլ պարտավորություններ		
Եկամուտների պահուստներ		
Վերագնահատման պահուստներ		
Այլ պահուստներ		
Ընդամենը՝ պասիվներ		

Ձև 2

Եկամուտների և ծախսերի նախահաշվարկներ

(կանխատեսումներ)

(հազար դրամ)

		Առաջիկա տարիներ	
		1-ին	2-րդ
1.	**Տոկոսային եկամուտներ**	**x**	**x**
1.1.	Բանկերում և այլ ֆինանսավարկային կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներից ստացված տոկոսներ		
1.2.	Տեղաբաշխված վարկերից ստացված տոկոսներ		
1.3.	Օվերդրաֆտից, օվերնայթից ստացված տոկոսներ		
1.4.	Վարկային քարտերից ստացված տոկոսներ		
1.5.	Բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին տրամադրված միջոցներից		
1.6.	Արժեթղթերից ստացված տոկոսներ		
1.7.	Այլ տոկոսային եկամուտներ		
	Ընդամենը՝ տոկոսային եկամուտներ		
2.	**Տոկոսային ծախսեր**	**x**	**x**
2.1.	Թղթակցային հաշիվների, ցպահանջ ավանդների և այլ ցպահանջ պարտավորությունների դիմաց վճարված տոկոսներ		
2.2.	Հետգնման պայմանագրերի գծով պարտավորությունների դիմաց վճարված տոկոսներ		
2.3.	Բանկերից և այլ ֆինանսավարկային կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսներ		
2.4.	Ներգրավված ժամկետային ավանդների դիմաց վճարված տոկոսներ		
2.5.	Այլ տոկոսային ծախսեր		
	Ընդամենը՝ տոկոսային ծախս		
	Զուտ տոկոսային եկամուտներ		

3.	**Ոչ տոկոսային եկամուտներ**	**x**	**x**
3.1.	Ստացված միջնորդավճարներ		
3.2.	Երաշխիքներից, ակրեդիտիվներից, հավատարմագրային կառավարումից ստացված եկամուտներ		
3.3.	Գանձապետարանի սպասարկումից ստացված եկամուտներ		
3.4.	Արժեթղթերի վաճառքից ստացված զուտ եկամուտներ		
3.5.	Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտներ		
3.6.	Արտարժույթի վերագնահատումից ստացված դրական (բացասական) փոխարժեքային տարբերություն		
3.7.	Հիմնական միջոցների վերագնահատումից ստացված զուտ եկամուտներ		
3.8.	Արտասովոր եկամուտներ		
3.9.	Այլ ոչ տոկոսային եկամուտներ		
Ընդամենը՝ ոչ տոկոսային եկամուտներ			
4.	**Ոչ տոկոսային ծախսեր**	**x**	**x**
4.1.	Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ		
4.2.	Գործուղման ծախսեր		
4.3.	Ամորտիզացիոն մասհանումներ		
4.4.	Մասնաճյուղի շենքի և այլ հիմնական միջոցների վարձակալության վճար		
4.5.	Շենքերի տնտեսական պահպանության ծախսեր		
4.6.	Վարկերի տրամադրման և վերադարձման ծախսեր		
4.7.	Տրանսպորտային ծախսեր		
4.8.	Կապի և հաղորդակցական միջոցների գծով ծախսեր		
4.9.	Ուսուցման ծախսեր		
4.10.	Այլ ոչ տոկոսային ծախսեր		
Ընդամենը՝ ոչ տոկոսային ծախսեր			
Զուտ ոչ տոկոսային եկամուտներ			
5.	**Հատկացումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին**	**x**	**x**
5.1.	Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների ընդհանուր պահուստին		
5.2.	Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների հատուկ պահուստին		
5.3.	Արժեթղթերի հնարավոր կորուստների ծածկման պահուստին		
Ընդամենը՝ հատկացումներ			
6.	**Ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին կատարված մասհանումների վերադարձ**	**x**	**x**
6.1.	Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների ընդհանուր պահուստից		
6.2.	Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների հատուկ պահուստից		
6.3.	Արժեթղթերի հնարավոր կորուստների ծածկման պահուստից		
Զուտ մասհանումներ			
Շահույթ (եկամուտների և ծախսերի տարբերություն)			

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը՝ բացառությամբ սույն որոշման 3-րդ կետի 7-րդ ենթակետով սահմանված պահանջի, որն ուժի մեջ է մտնում սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 3 ամիս հետո:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
4 ապրիլի 2011 թ., N 83-Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 269-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածները, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ և 70-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի սեպտեմբերի 9-ի «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ֆինանսական հաստատությունների համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգը և գործարքում իրական շահառուի առկայության (բացակայության) վերաբերյալ հայտարարության ձևը հաստատելու մասին» թիվ 269-Ն որոշմամբ հաստատված «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ֆինանսական հաստատությունների համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ» կանոնակարգում այսուհետ՝ (Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) Կանոնակարգի 11-րդ, 12-րդ, 12.1-րդ, 12.2-րդ և 12.3-րդ կետերը ուժը կորցրած ճանաչել:

2) Կանոնակարգի 13-րդ կետը «աշխատակցի» բառից հետո լրացնել «և բանկի ներքին աուդիտի ղեկավարի (անդամի)» բառերով:

2. Սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, իսկ սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետն ուժի մեջ է մտնում սույն որոշման ընդունման պահից վեց ամիս հետո:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
4 ապրիլի 2011 թ., N 84-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2011 թ.մարտի 29-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 6.05.2011 թ. (ՀՀԳՏ N11 (394), 16.05.2011):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունվարի 27-ի թիվ 22-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին**

Հիմք ընդունելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ և 72-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունվարի 27-ի ««Բանկերի ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի (ղեկավարի) որակավորման» կարգը հաստատելու մասին» թիվ 22-Ն որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
4 ապրիլի 2011 թ., N 85-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2011 թ. մարտի 29-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 6.05.2011 թ. (ՀՀԳՏ N11 (394), 16.05.2011):

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՄԱՅԻՍ 2011)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է ՀՀ ԿԲ խորհրդի 2011 թվականի հունիսի 7-ի նիստի «2011 թվականի հունիսի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ» արձանագրությունը, ինչպես նաև դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 583-631
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2011 թվականի հունիսի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ 49

Իրական հատվածի ցուցանիշներ 52

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Գների ինդեքսներ

Գնաճ

Գնաճին առավելապես նպաստած ապրանքախմբերը

Բնականոն գնաճ

Բնականոն գնաճին առավելապես նպաստած ապրանքատեսակները

Արտաքին հատվածի ցուցանիշներ 55

Ապրանքների արտահանում և ներմուծում

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները

Դրամական փոխանցումների ներհոսքն ըստ վճարային հաշվեկշռի

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

ՀՀ վճարային հաշվեկշիռ (ստանդարտ ներկայացում)

ՀՀ վճարային հաշվեկշիռ (վերլուծական ներկայացում)

ՀՀ միջազգային ներդրումային դիրքը 2011 թվականի մարտի վերջի դրությամբ

ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների միջազգային ներդրումային դիրքը 2011 թվականի մարտի վերջի դրությամբ

ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների արտաքին ակտիվների և պարտավորությունների արժութային կազմը

ՀՀ համախառն արտաքին պարտքը 2011 թվականի մարտի վերջի դրությամբ

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը

Պետական բյուջեի ցուցանիշներ 70

Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները

Դրամավարկային ցուցանիշներ 71

Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ

Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ

ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ապահովագրական ընկերությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ֆինանսական համակարգի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ

Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում

Ֆինանսական շուկա 83

Տոկոսադրույքներ

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը

ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոփ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները

Ռեպո շուկայի շրջանառությունը

Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ ոլորտների

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

Պետական (գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը
ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Առևտրային բանկերի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը
Վարկային ներդրումներ 102
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ տնտեսությունում ՀՀ դրամով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ տնտեսությունում արտարժույթով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ տնտեսությունում կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ՀՀ դրամով վարկային ներդրումները ՀՀ արդյունաբերության ճյուղերում
ՀՀ առևտրային բանկերի արտարժույթով վարկային ներդրումները ՀՀ արդյունաբերության ճյուղերում
ՀՀ առևտրային բանկերի վարկային ներդրումները ՀՀ արդյունաբերության ճյուղերում
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային ավանդները և վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների վարկային գործառնությունների գործիքակազմը
ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտ տնտեսությունում ՀՀ դրամով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտ տնտեսությունում արտարժույթով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտ տնտեսությունում կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
Առևտրային բանկերի ավանդներ 113
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 115
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Բանկային համակարգի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Հավատարմագրային կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 121
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնությունները արտասահմանում

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ (07.06.2011)

2011 թվականի հունիսի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2011 թվականի հունիսի 7-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝
ՀՀ ԿԲ նախագահի տեղակալ Ն. Երիցյանը,
խորհրդի անդամներ Ա. Դարբինյանը, Ա. Նորեկյանը, Ա. Չիլինգարյանը,
Վ. Աբրահամյանը

Խորհրդի նիստը սկսվեց իրավիճակային հաշվետվության ներկայացմամբ, որտեղ քննարկվեցին գնաճի, արտաքին միջավայրի, իրական, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների ընթացիկ զարգացումները: 2011 թվականի մայիսին 12-ամսյա գնաճը կազմել է 9%, որը բարձր է նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշից 0.1 տոկոսային կետով: Ընդ որում, գնաճի ցուցանիշին պարենային ապրանքների գների աճի նպաստումը կազմել է 7.9 տոկոսային կետ:

Ըստ պաշտոնական վիճակագրության՝ 2011 թվականի մայիսին, նախորդ ամսվա համեմատությամբ, արձանագրվել է 0.04% գնաճ. պարենային ապրանքների գների փոփոխություն չի արձանագրվել, ոչ պարենային ապրանքների գների աճի 0.1 տոկոսային կետով նպաստումը գնաճի ցուցանիշին (հիմնականում պայմանավորված բենզինի և դիզելային վառելիքի գնաճով) որոշ չափով չեզոքացվել է ծառայությունների սակագների նվազմամբ (պայմանավորված անապահով ընտանիքներին մատակարարվող բնական գազի սակագնի սուբսիդավորմամբ):

2011 թ. մայիսին, պայմանավորված համաշխարհային տնտեսության հեռանկարների վերաբերյալ վատատեսական սպասումների ձևավորմամբ, հիմնական հումքային ապրանքների գներն ամսվա սկզբին արձանագրել են որոշակի նվազում և կայունացել նախորդ ամսվա համեմատությամբ ցածր մակարդակում: Միջազգային ապրանքային շուկաներում դիտարկվող փոփոխությունները մեծապես պայմանավորվել են նաև ֆինանսական շուկաներում ԱՄՆ դոլարի և եվրոյի փոխարժեքների զարգացումներով: Մայիսին Լոնդոնում գնանշվող նավթի գնի անկումը կազմել է միջինը 7%, պղնձի գնի անկումը՝ 6%: Պարենային ապրանքների գները հարաբերականորեն կայուն վարքագիծ են դրսևորել. միջազգային գների ինդեքսը մայիսին ապրիլի համեմատությամբ նվազել է 1.02%-ով: Մայիսին ԱՄՆ դաշնային պահուստային համակարգը պահպանել է քաղաքականության տոկոսադրույքի ցածր մակարդակ՝ միաժամանակ իրականացնելով քանակական ընդլայնման միջոցառումներ, որոնք հավանաբար կշարունակվեն ԱՄՆ տնտեսության զարգացման արձանագրված ցածր տեմպերի պայմաններում:

2011 թ. ապրիլին տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ)[1] կազմել է 7.7%, ինչից ելնելով հունվար-ապրիլ ժամանակահատվածի ՏԱՑ-ը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, գնահատվել է 3.7%-ի շրջանակում: ՏԱՑ-ի աճը գրեթե ամբողջությամբ արդյունք է արդյունաբերության ճյուղում և ծառայությու-

[1] *ՏԱՑ-ը, ի տարբերություն ՀՆԱ ցուցանիշի, հաշվարկվում է տնտեսական գործունեության տեսակների թողարկման ծավալների, ոչ թե ավելացված արժեքների ծավալների հիման վրա և չի ներառում արտադրանքի զուտ հարկերն ու ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունները: Նշված ցուցանիշի վերաբերյալ տե՛ս 2011 թվականին ԱՎԾ կողմից հրապարակված «Տարվա ընթացքում ընթացիկ մակրոտնտեսական ցուցանիշների հավաքագրման, ամփոփման և հրապարակման ածողական մեթոդից դիսկրետ (զուտ ամսական) մեթոդին անցման մասին» մամուլի հաղորդագրությունը:*

ների ոլորտում արձանագրված թողարկման ծավալների աճի: Մասնավորապես, արդյունաբերության ճյուղում թողարկման ծավալների աճը հունվար-ապրիլին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 6.4%, ծառայությունների և առևտրի ծավալների աճը՝ համապատասխանաբար 8.8% և 1.6%: Շինարարության և գյուղատնտեսության ճյուղերում հունվար-ապրիլին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, արձանագրվել է թողարկման ծավալների 0.8-ական տոկոս անկում: Ընդ որում, գյուղատնտեսության ճյուղի անկումը անասնապահության ենթաճյուղի հաշվին էր. բուսաբուծության ենթաճյուղի աճը կազմել է 2.6%՝ պայմանավորված գարնանացանի և բանջարեղենի թողարկման ծավալներով:

Ինչ վերաբերում է արտաքին ապրանքաշրջանառությունը բնութագրող ցուցանիշներին, ապա հունվար-ապրիլին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, ապրանքների արտահանման ծավալներն ավելացել են 28.3%-ով, իսկ ներմուծումը՝ 10.9%-ով:

